Ս. ՍԱՐԳՍՅԱՆ. «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, *Երևան, «Անտարես», 2014, 680 էջ:*

*Աշխատությունը նվիրված է հայ ազատագրական շարժման գաղափարախոսության մեջ խոր հետք թողած Մ. Փորթուգալյանին և նրա խոսափող «Արմենիա» թերթին: Հեղինակը կատարել է լուրջ և ծավալուն աշխատանք՝ հանրագումարի բերելով ժամանակի ազատագրական գաղափարախոսության ձևավորման և բուն այդ շարժման հետ ունեցած՝ «Արմենիայի» ու նրա խմբագրի աղերսները: Աշխատության բոլոր չորս գլուխներում ընդգրկված են միմյանց հարակից հիմնահարցեր, որոնց հետազոտության առանցքն ու կենտրոնը շարունակ մնում են Մ. Փորթուգալյանն ու «Արմենիան»՝ ազատագրական շարժման գաղափարախոսության մեջ իրենց որոշակի ներդրումներով ու անհատականությամբ: Իր շոշափած հարցերին հեղինակը մոտեցել է գիտական բարեխղճությամբ և փաստերի բազմակողմանի լուսաբանությամբ, որ նրան հնարավորություն է տվել հասնելու գրքի ծավալից շատ ավելի տպավորիչ ինքնատիպ ընդհանրացումների ու եզրակացությունների: Իր հետազոտության նպատակն ու խնդիրները հեղինակը հստակ ձևակերպել է տարողունակ առաջաբանում՝ բնութագրելով հիմնահարցերի բովանդակությունն ու արժեքը մեր պատմագիտության մեջ՝ առանձնացնելով իր ուսումնասիրության առարկայի այժմեականությունը: Միաժամանակ ուրվագծված են հեղինակային մոտեցումների նշանախեցերը նախատեսված աշխատանքի շրջանակներում:*




*Գրքի առաջին գլխում հեղինակը վերհանել է Մ. Փորթուգալյանի կենսագրության ու գործունեության կարևոր կողմերը, որպիսիք հանդես են գալիս իբրև անհրաժեշտ հենք՝ Մ. Փորթուգալյանի աշխարհայացքային ձևավորման ու մտավոր կողմնորոշումների տեսակետից: Տրվում է, ի լրումն առաջաբանի, Փորթուգալյանի կենսագրությանն առնչվող հանգամանքների զուսպ և անաչառ գնահատականը: Արժե նշել Փորթուգալյանի՝ 1870-ական թթ. գործունեության առանձնանշումը՝ նրա գաղափարաբանության զարգացման մեջ (նրա նախաձեռնած «Վարագդատյան ընկերությունը», մանկավարժական ու հրապարակախոսական աշխատանքները և այլն): Կենսագրական հանգամանքներին լծորդված՝ հեղինակն ի հայտ է*

*բերում ինքնուրույն մտածողի և գործչի ըմբռստ տրամադրությունները, ընդհարումները Եվդոկիայում «ջոջ աղաների» հետ, իր խմբագրած «Ասիա» թերթի համարձակ կեցվածքը և այլն, որոնք մի հայտնի չափով պետք է հաստատեին Մ. Փորթուգալյանի ազատագրական գաղափարախոսությունը: Այս վերջինի համազգային բնույթը հեղինակը հիմնավորում է որոշակի իրողությունների տրամաբանությամբ՝ հայրենիքի և նրա ժողովրդի ազատագրման գաղափարը առարկայական դարձնելով այլ գործիչների հետ (Հ. Շիշմանյան, Մ. Չերազ, Ա. Արփիարյան և ուրիշներ) Մ. Փորթուգալյանի համագործակցությամբ: Սրան զուգահեռ, հեղինակը նկատում է մի կարևոր մտայնության դրսևորում՝ ազատագրական մտքի սնուցումը բնաշխարհի և նրա ժողովրդի միջավայրում, սերտաճումը հայրենի իրականությանը: Իրոք, Բեռլինի վեհաժողովից հետո ազատագրության ուղին տեղափոխվում էր «ազգային հարթակ» և առջևից ընթացողներից էր Մ. Փորթուգալյանը՝ Վանում իր ծավալած գործունեությամբ: Արևելահայ հատվածի հետ ևս, խորանում էին կապերն ու հարաբերությունները: Այստեղ բացահայտվում են 1876 թ. «Մշակի», Գր. Արծրունու և Ռաֆֆու հետ Մ. Փորթուգալյանի ու Ա. Արփիարյանի գործակցությունը, որի հենքը քաղաքական և գաղափարական առնչություններն էին: Առհասարակ հեղինակը հիմնավոր ուշադրություն է դարձնում հիմնահարցի կարևոր կողմերին, ցույց տալով, որ Վանում Փորթուգալյանի հիմնած «Գործակցական միությունը» «Փաստորեն հանդիսացավ ապագա Արմենական կուսակցության կազմակերպական կորիզը» (էջ 43): Վանի վարժապետանոցը և ապա Կեդրոնական վարժարանը այդ գործունեության առավել լայն շառավիղներն էին ի հայտ բերում, որտեղ ազատագրական գաղափարներով էր դաստիարակվում վեր բարձրացող մի ամբողջ սերունդ: Ֆրանսիա՝ Մարսել տարագրված Մ. Փորթուգալյանը հետևում էր թողնում այդ գաղափարներով տոգորված հետագա գործիչների որոշակի միջավայր և տրամադրություններ: Գրքում բացահայտվում են նոր, եվրոպական իրականության մեջ Փորթուգալյանի, հիրավի, տիտանական ջանքերը «Արմենիա» թերթի հրատարակության հետ կապված դժվարությունները հաղթահարելիս: Հեղինակը Փորթուգալյանի գործունեությունը բնութագրում է համակողմանիորեն՝ հենվելով Գր. Արծրունու, Ռ. Զարդարյանի, Մ. Նաթանյանի, Վ. Թեքեյանի, Խաժակի և այլոց՝ կարծիքների ու վերաբերմունքի վրա: Աշխատության մեջ շարունակելով բացահայտել Փորթուգալյանի գործունեության գաղափարական ուղղվածությունը, Ս. Սարգսյանը ոչ պակաս չափերով այն լուսաբանում է նաև գործնական դրսևորումների մեջ: «Արմենիայի» քարոզչության, նպատակների ու խնդիրների հետնախորքին հեղինակին հաջողվել է տալ Փորթուգալյան գործչի ու անհատի տպավորիչ բնութագիրը՝ օգտագործելով ժամանակի մամուլի նյութերը: Երկուստեք զուգահեռ ընթացող հետազոտական այս ուղղությունները գրքում հատ-*

*վում են ու ամբողջանում՝ ներկայացնելով բուն «Արմենիան» իբրև ազատագրական պայքարի սերմնացան և խոսափող:*

*Աշխատության երկրորդ գլխում՝ «Արմենիա» պարբերականի ծնունդը» վերնագրով, հանգամանորեն վերլուծվում են լրագրի գաղափարական ուղղությունը, նկարագիրը և գիտական հետազոտության տեսակետից շատ կարևոր՝ Մ. Փորթուգալյանի «Արմենիա» – Արմենական կուսակցության առնչությունները: Այստեղ պետք է նշել հեղինակի վերլուծական լուրջ աշխատանքը՝ Փորթուգալյանի և Արմենական կուսակցության աղերսների բացահայտման կտրվածքով: Ս. Սարգսյանը վերացնում է մեր պատմագիտության մեջ հայտնի այն շփոթը, թե, իբր, Արմենական կուսակցությունը հիմնվել է Մարսելում՝ սկիզբ առնելով Մ. Փորթուգալյանի «Հայոց հայրենասիրական միությունից», 1889 թ.: Իրականում, ինչպես համոզում է հեղինակը, նշված միությունը կազմվել է Արմենական կուսակցության ստեղծումից չորս տարի անց, մինչդեռ կուսակցությունը, իբրև առաջին հեղափոխական կազմակերպություն, հիմնվել է 1885 թ., Վանում, երբ Փորթուգալյանն արդեն վտարանդել էր երկրից: Այս դեպքում ևս, ինչպես այլ դիտարկումներում, հեղինակը հավատարիմ է մնում Փորթուգալյան գործչին բնութագրող իր մեկնակետին՝ վերջինս դեմ էր առանձին կուսակցությունների ստեղծմանը, ելնելով ազգային շարժման միասնականության գաղափարից: Ս. Սարգսյանը այս համոզիչ հենքի վրա ևս եզրակացնում է, որ արմենականները «Արմենիայի» հետ կապված էին միայն գաղափարապես՝ գործնականում լինելով անկախ, որի հետևանքն էր հարաբերությունների հայտնի սառնությունը Փորթուգալյանի և արմենականների միջև:*

*Մ. Փորթուգալյանի ազատագրական հայեցության մեջ առանձնացվում է ազգի գոյատևման համար նշանակալի՝ զենքով պաշտպանվելու մոտեցումը: Հեղինակը կարևորում է, որպես այս մտայնության հենք՝ Արևմտահայաստանի իրական վիճակի բացահայտումները լրագրի էջերում և դրան ուղղված՝ այդ հրատարակության բաժինների վերլուծությունը: Անտարակույս, հեղինակը հանդես է բերում լուրջ հետազոտողին վայել զգուշություն՝ հետազային թողնելով պատմական մի շարք կնճիռների հանգուցալուծումները, նա իրավացիորեն դեմ է կտրուկ և միակողմանի գնահատումներին, հատկապես այն տեսակետից, թե «Արմենիայի» նպատակը հայերի ազատագրումն էր՝ բացառապես եվրոպական դիվանագիտության միջոցով: Նա ցույց է տալիս, որ Փորթուգալյանը, իսկապես, չի անտեսել այդ միջոցը, բայց ամենից առաջ ապավինել է սեփական՝ ազգի ներուժին, մենք կավելացնեինք՝ շարունակելով հայ ազատամտության այն հայտնի ուղեգիծը, որ ի հայտ էր եկել դեռևս 1870-ականին՝ Մ. Մամուրյանի, այնուհետև Գր. Արծրունու հայեցության մեջ:*

*Աշխատության երրորդ գլխում քննարկվում են լրագրում Արևմտահայաստանի սոցիալ-տնտեսական կացության վերաբերյալ անդրադարձները, ինչպես և ազգա-*

*յին իրականության թերությունների վերհանումները նրա էջերում: Որոշակի իրողությունների (հայերի հողազրկում, բռնություններ, քրդական գործոնի իրատեսական գնահատական, հայերին բնաջնջելու պետական քաղաքականություն և այլն) գնահատականը հեղինակը տալիս է փոխլրացնող վերլուծություններով, որոնք, իրենց հերթին, հանդես են գալիս իբրև Փորթուգալյանի և նրա լրագրի գնահատական: Ընդսմին, Փորթուգալյանի գաղափարախոսությունը ցուցադրվում է որոշակի հանգրվանների ամրագրմամբ, որպիսիք են ազգի զորության խնդրի արծարծումները, պահպանողական մտածողության ու վարքագծի հաղթահարումը, մտավոր և նյութական հնարավորությունների ընդլայնումը՝ բռնության դեմ պայքարի նախապատրաստվելիս, հակազդեցությունն արտագաղթին, ազգային եկեղեցու արժեքավորումը, միջազգային դիվանագիտական փորձի յուրացումը և այլն: Հարկ է առանձնացնել «Արմենիայի» ու նրա ընթերցողների փոխադարձ կապերի վերհանումը, որտեղ հեղինակը արժանի ուշադրություն է դարձնում երկու հանգամանքի՝ լրագրի անուրանալի ազդեցությունը իր ընթերցողների վրա (որ վկայում է նրա քարոզչության արդյունավետության մասին) և դրա նամականու սկզբնաղբյուրային ու տեղեկատվական նշանակությունը:*

*Աշխատության վերջին՝ չորրորդ գլխում հեղինակը հաջողությամբ բացահայտել է Արևմտահայաստանի ինքնորոշման հարցում «Արմենիայի» ինքնատիպ մոտեցումները: Առհասարակ, Արևմտյան Հայաստանի ինքնորոշման հարցում «Արմենիայի» ըմբռնումները բավական տարբերվում են ազգային կուսակցությունների ուղղվածությունից կամ կողմնորոշումների միագիծ բնույթից: Դրանք միջակա տեղ են գրավում մի կողմից մեծ տերությունների գործոնի հաշվառման և մյուս կողմից՝ բուն ազգի ուժերով ազատություն նվաճելու մտայնության միջև: Հազիվ թե այս մտայնությունը գոհացներ ազգի ազատությունը բացառապես արտաքին ուժերի փրկչական առաքելությանն առնչող կուսակցություններին ու գործիչներին, սակայն Փորթուգալյանի դիրքորոշումը, որքան էլ վիճահարույց, թվում է, կարող էր հավակնել շատ ավելի արդյունավետ ուղեգծի իրավունքի, քան այդ նույն կուսակցությունների և գործիչների ակնկալիքներն էին: Թեկուզ և այն իմաստով, որ «Արմենիայի» տարբերակի դեպքում, ժողովրդին կնախապատրաստեին զինված ինքնապաշտպանության շատ ավելի լայն չափերով, քան այդ արվեց իրականում, տարբերայնորեն և տեղայնության սահմանափակություններով: Այնուհետև, վերոհիշյալ մոտեցումը բխում էր Փորթուգալյանի գաղափարաբանությունից, որի հեղինակային վերլուծությունը բացահայտվում է հենց «Արմենիայի» լայնախոհությամբ՝ իր էջերում հյուրընկալելու քաղաքական տարբեր ուղղությունների հարող գործիչներին: Այստեղ թերևս մեկ վերապահում պետք է անել. Փորթուգալյանը և նրա «Արմենիան» հստակ ու որոշակի չեն արտահայտել իրենց վերաբերմունքը ապստամբական պայքարը որպես հայրենիքի ազատության հիմնական միջոց համարելու*

*տեսակետը, որ մի հայտնի չափով վերացականություն էր տալիս նշված հիմնահարցի ձևակերպմանը: Կարծում ենք, որ հեղինակն այդ ցույց է տալիս Փորթուգալյանի «Հայոց հայրենասիրական միության» նպատակների խաղաղ և անարյուն նկարագրի բնութագրմամբ, ինչպես և այն իրողությամբ, որ Փորթուգալյանը մերժում է Ավ. Նազարբեկի առաջարկը՝ ստեղծելու հեղափոխական կազմակերպություն: Անշուշտ, հեղինակն այստեղ հենվում է իր այն մտադրությունին, որ Փորթուգալյանն ազատագրության հիմնահարցի լուծումը ենթադրում էր և՛ խաղաղ, և՛ զինված պայքարի միջոցներով, ուստի չէր կարող հակվել դեպի այս զույգ բաղադրիչներից միայն մեկի կողմը, որ բացառապես որդեգրել էին ապագա հնչակյանները և որը վերջնականապես տարանջատեց նրանց Փորթուգալյանից: Վերոհիշյալին համապատասխան, հեղինակը ճիշտ է նկատում «Արմենիայի» պարունակած երկու ուղղությունները՝ «չափավոր և հեղափոխական» (էջ 194), ի վերջո, մի երկվություն, որ այսուհանդերձ չէր բացառում գործողության երկու ուղիները համատեղելու նրա ուրույն, թերևս վարանոտ, զաղափարաբանությունը: Այս հիմնահարցը Ս. Սարգսյանը քննարկում է վերջին գլխի «Արևմտյան Հայաստանի ինքնորոշման շուրջ հայ ազգային կուսակցությունների մտայնությունը» վերնագրով ենթագլխում: Ցույց է տրվում, որ Փորթուգալյանն առարկում էր «ազգային կարողությունները ընկերվարական դատին ծառայեցնելու» փորձերին՝ դրանք համարելով ժամանակավրեպ և վնասակար՝ հայաստանցիների համար: Այս առումով հեղինակը հիմնավորում է «Հայաստան», «Հնչակ» և «Հայք» թերթերի քննադատությունը «Արմենիայի» էջերում:*

*Հետաքրքիր են հեղինակի դիտարկումները «այսօր էլ վիճելի» այն հարցի մասին, «թե ի վերջո, Սասունի 1894 թ. ելույթը ապստամբություն էր, թե ինքնապաշտպանություն» (էջ 234): Կարելի է կարծել, համաձայնելով հեղինակի հետ, որ այն ինքնապաշտպանություն էր, որովհետև և՛ 1890-ականների, և՛ 1904 թ. Սասունի հերոսական կռիվները իրենց բնույթով ու տրամաբանությամբ ուղղված էին օսմանյան պետության* նախահարձակ ու ջարդարարական *գործողությունների դեմ՝ պաշտպանելու սեփական կյանքն ու ինչքը բռնապետության խեղդող գալարներից: Նույն ուղղվածությունն ունեին նաև զեյթունցիների կռիվները՝ հատկապես 1862 և 1896 թթ., երբ իրերի առկա դրությունը խախտվում էր ոչ թե հայերի, այլ օսմանյան բռնապետության կողմից: Եվ, բացի այս ամենից, «ինքնապաշտպանական կռիվ» ձևակերպումը ևս մտնում է անհամեմատ ավելի լայն՝ «ազատագրական պայքար» հասկացության տրամաբանական ծավալի մեջ, այնպես որ նշված որոշակիացումը որևէ չափով չի նսեմացնում ժողովրդի ընդվզումը բռնապետության դեմ: Հայությունը, կարծում ենք, Օսմանյան կայսրության մեջ երբևէ ոչ ապստամբ է եղել, և ոչ էլ հեղափոխական, հակառակ անցյալի և ներկայիս հիմնավորողների, նա պաշտ-*

*պանել է իր բնականոն իրավունքները: Ազգի ընդվզումը եղել է բացառապես ինքնապաշտպանական պայքար:*

*Աշխատության վերջին ենթագլխում ևս Ս. Սարգսյանը հավատարիմ է մնում իր առաջադիր խնդրին՝ ըստ հնարավորին վերհանել Փորթուգալյանի գաղափարաբանության շերտերը, տվյալ դեպքում՝ նրա լրագրի վերաբերմունքը արտաքին քաղաքական կողմնորոշումների նկատմամբ: Այստեղ ևս նրան հաջողվել է զուսպ և իրատեսական հայեցվածքով գնահատել երևելի գործչի ժողովրդավարական ու ազատամիտ գաղափարախոսության ինքնատիպ ծալքերը: Մասնավորապես այն, որ հաշվի առնելով մեծ տերությունների անխուսափելի ազդեցությունը Հայկական հարցի զարգացումներում, Մ. Փորթուգալյանը միշտ էլ եղել է ազգային կողմնորոշման հաստատուն համոզմունքին՝ իր հայտնի ձևակերպմամբ. «Մեր կուսակցության նշանաբանն է Հայը՝ Հայաստանին և Հայաստանը՝ Հային» (էջ 254):*

*Այսպիսի բազմաժալ և լուրջ դիմադրողականություն ունեցող նյութի գիտական մշակումը գրեթե անհնարին է պատկերացնել առանց բացթողումների կամ վիճահարույց ձևակերպումների: Այսպես, կարելի էր, թեկուզ ընդհանուր գծերով, ցույց տալ կամ գնահատել Մ. Փորթուգալյանի լրագրի վերաբերմունքը երիտթուրքերի իշխանության հանդեպ, դրա բովանդակությունը ցեղասպանության տարիներին (1908–1918-ական թթ.): Հեղինակի և նրա գրքի խմբագրի՝ տողերիս գրողի աչքից ցավալիորեն վրիպել է այն, որ Կ. Պոլսի «Լուսավորչյան ընկերությունը» ստեղծել էր ոչ թե «նշանավոր մտավորական» (էջ 33) Գր. Չիլինկիրյանը (իմա Զմյուռնիայի «Ծաղիկի» խմբագիրը), այլ շատ ավելի համեստ և կրոնական գործիչ Հակոբ վարդապետ Չիլինկիրյանը: Ս. Սարգսյանը, որ սովորաբար զգայուն է Փորթուգալյանի հայացքներում կատարված գրեթե բոլոր տեղաշարժերի նկատմամբ, գրում է, որ նա «1920-ական թթ. սկզբներին, մեզ համար այնքան էլ ոչ պարզ դրդապատճառներով՝ հակվեց դեպի Դաշնակցությունը» (էջ 84). թե ինչու, չի տրվում ակնկալվող բացատրությունը: Թերևս, իրեն զգացնել է տվել անհրաժեշտ նյութի պակասը:*

*Անկախ այս ամենից, կարևորն այն լուրջ ներդրումն է, որ արել է Ս. Սարգսյանը մեր պատմագիտական գրականության մեջ՝ վերհանելով Մ. Փորթուգալյանի և նրա «Արմենիա» լրագրի մտայնությունը՝ իբրև ժամանակի հայ հասարակաքաղաքական մտքի բնութագրական և մնայուն դրսևորում:*

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ